երկրի ամրոցաբնակիչներին՝ նորան հարկ տալու հիման վերայ, նա ապա մեկնեցաւ Վիրք։

Ինձ պատմել է Բարհակ Ի. Աբդալլահ,[1] Դուինի բնակիչներից ծերագոյնը, թէ Հաբիբ Ի. Մասլամայ իւրայիններով գնաց Վիրք։ Հասնելով Զատ-ալ-Լուջում տեղը, նոքա արձակեցին իրանց անասուններր արածելու, իսկ նոցա սանձերը մի տեղ ժողովեցին։ Այն ժամանակ նոցա վերայ եկան բարբարոսներ եւ սոխպեցին նոցա շտապով հեռանալ արօտատեղից. կուի բռնելով հեռաները, նոքա արտաքսեցին նոցա այնտեղից եւ թափեցին նոցանից սանձերը, իսկ անասուններից՝ որը կարողացան։ Բայց մուսլիմները, յետ դառնալով առ երեսս փախուստից, կոտորեցին նոցա եւ հանեցին նոցանից այն, ինչ որ նոքա խլած էին, ուստի տերն կոչուեցաւ Սեֆինալ։

Պատմում են, որ Հաբիբի մօտ եկաւ Վրաց իշխանի եւ բնակիչների կողմից հրեշտակ, բերելով նորան նոցա պատգամաւորութեան գիրը եւ խնդրելով նորանից՝ պարգեւել նոցա խաղաղութեան եւ հովանաւորութեան թուղթ։ Հաբիբ գրեց նոցա հետեւեալն.

"Ձեր Նուքլայ (Նիկողայոս) հրեշտակը եկաւ ինձ եւ ինձ հետ եղող հաւատացեալների մօտ եւ յայտնեց ձեր կողմից, թէ մեզ ստեղծել է Աստուած իբրեւ մի ազնիւ եւ գերազանց ազգ. ահա այսպէս է կամեցել Աստուած եւ թող մեծապէս փառաւորւի նա, թող նորա օրհնութիւնն լինի Մահմեդի՝ նորա մարգարէի՝ վերայ, որին նա ընտրել է իւր արարածների մէջ, եւ խաղաղութիւն նորա հետ։ Դուք ասում էք, որ ձեզ հաճելի է մեր խաղաղութիւնն. ես գնահատեցի ձեր ընծան իբրեւ ձեր գլխահարկի փոխարէն, եւ գրեցի ձեզ հովանաւո-

---

1 Նոյն աւանդողն է, որին կը յիշէ մեր հեղինակը հատուածիս սկզբում։